

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ Անկախ աուդիտորի եզրակացություն

**Հայաստանի Հանրապետության վարչապետի
գրասենյակ**

**Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության
ծրագիր**

TF0A5519 դրամաշնորհային համաձայնագիր

2020թ. մայիսի 11-ի դրությամբ և 2017թ. նոյեմբերի 6-ից մինչև
2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի համար



Բովանդակություն

Եզրակացություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվություն	6
Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	7
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

Հայաստանի Հանրապետության վարչապետի գրասենյակին,

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎՋԲ) և Միջազգային զարգացման ընկերակցության (ՄՋԸ) TF0A5519 դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ծրագրի (Ծրագիր) կից ներկայացված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունը և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը՝ 2020թ. մայիսի 11-ի դրությամբ և 2017թ. նոյեմբերի 6-ից մինչև 2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի համար, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ծրագրի դրամական միջոցների մնացորդը 2020թ. մայիսի 11-ի դրությամբ, ինչպես նաև 2017թ. նոյեմբերի 6-ից մինչև 2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում ստացված և վճարված դրամական միջոցները՝ համաձայն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՄ)՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկային սկզբունքով», Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև TF0A5519 դրամաշնորհային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք «Հայաստանի Հանրապետության վարչապետի գրասենյակից» («Գրասենյակ») համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրը) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք



համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների շեշտադրում

- Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որը վերաբերում է հաշվապահական հաշվառման հիմունքներին: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու Գրասենյակի ղեկավարությանը՝ Համաշխարհային Բանկի ուղեցույցներին և TFOA5519 դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին՝ համապատասխանելու համար: Ուստի, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:
- Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 3-ի վրա, որտեղ ներկայացված է, որ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. ապրիլի 30-ը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:
- Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 11-ի վրա, որտեղ ներկայացված է խորհրդատվական ծառայությունների պայմանագրի իրականացումը, որը դադարեցվել էր, քանի որ խորհրդատուների կողմից ներկայացված հաշվետվության վերջնական տարբերակը չէր ընդունվել: Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում ներառվել է այս պայմանագրի գումարի միայն մի մասը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

Գրասենյակը պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրատարակված Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՀՄՄ)՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկային սկզբունքով», Համաշխարհային բանկի ուղեցույցների և TFOA5519 դրամաշնորհային համաձայնագրի համապատասխան հոդվածների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս Ծրագրի

Ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Գրասենյակի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք ղեկավար անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

29 հունիսի 2020թ.



Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Փաստացի			Պլանավորված	Տարբերություն	
	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակա- շրջանի համար	2020թ. մայիսի 11-ի դրությամբ	2020թ. մայիսի 11-ի դրությամբ	2020թ. մայիսի 11-ի դրությամբ
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ (ծանոթ. 4)	-	57,901	57,999			
Ավելացնել. Ստացված դրամական միջոցներ						
ՎՋՄՔ ֆինանսավորում (ծանոթ. 5)	60,000	19,582	157,946	237,528		
Կառավարության համաֆինանսավորում (ծանոթ. 6)	-	3,803	17,824	21,627		
Ընդամենը ստացված դրամական միջոցներ	60,000	23,385	175,770	259,155		
Փոխարժեքային տարբերություն	-	31	(39)	(8)		
Նվազեցնել. Վճարված դրամական միջոցներ						
(1) Ծրագրի խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում	2,099	23,318	216,734	242,151	278,491	(36,340)
Ընդամենը վճարված դրամական միջոցներ	2,099	23,318	216,734	242,151	278,491	(36,340)
Դրամական միջոցների վերջնական մնացորդ (ծանոթ. 4)	57,901	57,999	16,996	16,996		

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել է 2020թ. հունիսի 29-ին՝

Սերժ Վարազ Սիսեոյան

Անահիտ Կարապետյան

Փոխվարչապետի գրասենյակի ղեկավար

Ֆինանսական կառավարման մասնագետ

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 18-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Փաստացի			Պլանավորված			Տարբերություն
	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակա- շրջանի համար	2020թ. մայիսի 11-ի դրությամբ	2020թ. մայիսի 11-ի դրությամբ	2020թ. մայիսի 11-ի դրությամբ	
Մաս I. Վերլուծական հիմնավորումներ	-	21,317	163,834	185,151	208,391	(23,240)	264,000
Մաս II Քաղաքականության մշակման համար իրազեկում և խորհրդակցություն	-	-	4,275	4,275	6,000	(1,725)	240,000
Մաս III. Կարողությունների զարգացում	2,099	2,001	48,625	52,725	64,100	(11,375)	36,000
Ընդամենը	2,099	23,318	216,734	242,151	278,491	(36,340)	540,000

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից
մինչև 18-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեությունը և ընդհանուր տեղեկատվություն

Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ծրագրի (Ծրագիր) թիվ TFOA5519 դրամաշնորհային համաձայնագիրը կնքվել է 2017թ. հոկտեմբերի 25-ին՝ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶԲ) և Միջազգային զարգացման ընկերակցության (ՄԶԸ) միջև: Դրամաշնորհի գումարը կազմում է 450,000 ԱՄՆ դոլար:

Ծրագրի գործունեությունը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

- ա) Վերլուծական հիմնավորումներ,
- բ) Քաղաքականության մշակման համար իրազեկում և խորհրդակցություն,
- գ) Կարողությունների զարգացում:

Համաձայն դրամաշնորհային համաձայնագրի՝ Ծրագրի ֆինանսավորումը կատարվում է հետևյալ ծախսային հոդվածների միջոցով.

Հոդված	Ծախսերի ֆինանսավորում տոկոսով (առանց հարկերի)	Հատկացված դրամաշնորհային միջոցներ (արտահայտված ԱՄՆ դոլարով)
1. Ծրագրի խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում	100 %	450,000
		450,000

Ծրագրի շրջանակներում չեն իրականացվել որևէ գործարքներ կամ վճարումներ՝ 2017թ. նոյեմբերի 6-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար: Հետևաբար, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն ներկայացվել այս ժամանակաշրջանի համար: Փոխարենը, Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված առաջին հաշվետու ժամանակաշրջանը ներառում է 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարին:

Ծրագիրն իրականացվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի (ԱՖԾԿԿ) կողմից: ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 13-ին թվագրված թիվ 1427-Ն որոշման համաձայն՝ 2019թ. մարտի 31-ից դադարեցվել է ԱՖԾԿԿ գործունեությունը: Սահմանվել է, որ ԱՖԾԿԿ-ի գործառնությունները շարունակելու է իրականացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ ծրագրերի իրականացման վարչություն՝ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման միջոցով: ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ին թվագրված թիվ 1919-Ն որոշման համաձայն սահմանվել է, որ Ծրագրի գործառնությունները շարունակելու է իրականացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի գրասենյակը («Գրասենյակ»):

Գրասենյակի իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք 1:

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Համապատասխանություն

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՀՄՍ)՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով», Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև TFOA5519 դրամաշնորհային համաձայնագրի համապատասխան հոդվածների պահանջների:

Միաժամանակ, Գրասենյակը ներկայացնում է նաև հաշվետու ամսաթվի դրությամբ Ծրագրի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ որպես լրացուցիչ բացահայտում, որը խրախուսվում է ՀՀՀՀՄՍ՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով», 2-րդ մասով (տե՛ս ծանոթ. 10):

2.2 Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝

- ա) 2017թ. նոյեմբերի 6-ից մինչև 2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունը, որտեղ առանձին ներկայացված են Համաշխարհային Բանկի և պայմանագրային գործընկերոջ միջոցները, և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը:
- բ) Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ պարզաբանող ծանոթագրությունները (ներառյալ լրացուցիչ հաշվապահական հաշվառման քաղաքականություն և բացահայտումներ), ներառյալ
 - ծանոթագրություններում ներառված ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումները,
 - ծանոթագրություններում ներառված հատուկ հաշվի հաշվետվությունը,
 - ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, որտեղ ներկայացված են Ծրագրի կուտակված ֆոնդերը, բանկային մնացորդները, Ծրագրի այլ ակտիվները և պարտավորությունները, ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2-ում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ծրագրի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ծրագրի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Համաշխարհային բանկի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են client connection (<https://clientconnection.worldbank.org>) համակարգի փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 483.75 ՀՀ դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 479.7 ՀՀ դրամ

և 2020թ. մայիսի 11-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 486.02 ՀՀ դրամ: Փոխարժեքային տարբերությունը ճանաչվում է ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունում և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Փոխարժեքային տարբերություն» հոդվածում:

2.4 Ծրագրի ծախսեր

Ծրագրի շրջանակներում առաջացած ծախսերը ճանաչվում են հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով՝ դրամական միջոցների վճարման պահին: Ծախսերը ճանաչվում են ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունում որպես «վճարված դրամական միջոցներ»: Ի հավելումն, ծախսերի բացվածքը ըստ բաղադրիչների ներկայացված է ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունում:

2.5 Ծրագրի ֆինանսավորում

TF0A5519 դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը գրանցվում է ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունում որպես «ստացված դրամական միջոցներ» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ի լրումն՝ ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում (տե՛ս ծանոթ. 10):

2.6 ՎՋՄԲ ֆինանսավորում

Վարկային համաձայնագրի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով Համաշխարհային Բանկը վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել փոխառուին՝ նրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել փոխառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը զուգընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը փոխառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձանց՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար փոխառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է փոխառուի և Բանկի կողմից:

3 Ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն TF0A5519 դրամաշնորհային համաձայնագրի Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. ապրիլի 30-ը:

4 Դրամական միջոցներ

ԱՄՆ դոլար

	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. մայիսի 11-ի դրությամբ
Հատուկ հաշիվ	57,901	57,999	16,216
Կառավարության համաֆինանսավորման հաշիվ	-	-	780
	57,901	57,999	16,996

Հաշվետու ամսաթվից հետո հատուկ հաշվից և կառավարության համաֆինանսավորման հաշվից աուդիտի ծառայության համար պետք է վճարվի գումար՝ համապատասխանաբար 1,896 հազար դրամ և 379 հազար դրամ, մնացած գումարը պետք է վերադարձվի ՀԲ-ին:

5 ՎԶՄԲ-ի ֆինանսավորում

ԱՄՆ դոլար

	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. հունվարի 1-ից 2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակա- շրջանի համար	2020թ. մայիսի 11-ի դրությամբ
ԾԱՀ ընթացակարգեր (ծանոթ. 7)	-	21,583	199,729	221,312
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)	60,000	(2,001)	(41,783)	16,216
	<u>60,000</u>	<u>19,582</u>	<u>157,946</u>	<u>237,528</u>

6 Կառավարության համաֆինանսավորում

ԱՄՆ դոլար

	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. հունվարի 1-ից 2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակա- շրջանի համա	2020թ. մայիսի 11-ի դրությամբ
Ստացված համաֆինանսավորում	9,116	18,784	27,900
Ետ վերադարձված գումար	(5,313)	(960)	(6,273)
	<u>3,803</u>	<u>17,824</u>	<u>21,627</u>

7 ԾԱՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման
դիմումներ

2017թ. նոյեմբերի 6-ից 2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի համար
ԱՄՆ դոլար

Դիմում	Հոդված
Ծրագրի խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում	
2 DA	2,099
3 DA	17,483
4 DA	2,001
6 DA	35,805
7 DA	59,899
8 DA	12,176
9 DA	48,065
10 DA	43,784
Ընդամենը	221,312

8 Հատուկ հաշվի հաշվետվություն

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ

-

Ավելացնել.

Անողական չբացատրված անհամապատասխանություն

-

Վարկի համալրում տարվա ընթացքում

60,000

60,000

60,000

Նվազեցնել. Հատուկ հաշվից ՎԶՄԲ-ին փոխհատուցում տարվա ընթացքում

-

Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)

60,000

Վերջնական մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

57,901

Ավելացնել.

Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար

2,099

Ծառայությունների վճարներ (եթե առկա են)

-

2,099

2,099

Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)

-

Ընդամենը հաշվառված կանխավճար (2)

60,000

Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)

-

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ		57,901
Ավելացնել.		
Աճողական չբացատրված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում տարվա ընթացքում	19,582	
	<u>19,582</u>	<u>19,582</u>
 Նվազեցնել. Հատուկ հաշվից ՎՋՄԲ-ին փոխհատուցում տարվա ընթացքում		-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		<u>77,483</u>
Վերջնական մնացորդ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		57,999
Ավելացնել.		
Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	19,484	
Ծառայությունների վճարներ (եթե առկա են)	-	
	<u>19,484</u>	<u>19,484</u>
 Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		-
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		<u>77,483</u>
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

2020թ. մայիսի 11-ի դրությամբ և 2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի համար

ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ		57,999
Ավելացնել.		
Աճողական չբացատրված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում տարվա ընթացքում	157,946	
	<u>157,946</u>	<u>157,946</u>
Նվազեցնել. Հատուկ հաշվից ՎՋՄԲ-ին փոխհատուցում տարվա ընթացքում		-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		<u>215,945</u>
Վերջնական մնացորդ 2020թ. մայիսի 11-ի դրությամբ		16,216
Ավելացնել.		
Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	199,729	
Ծառայությունների վճարներ (եթե առկա են)	-	
	<u>199,729</u>	<u>199,729</u>
Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		-
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		<u>215,945</u>
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

9 Գրասենյակի կողմից ստացված գումարների և
Համաշխարհային Բանկի փոխհատուցումների համադրում

2017թ. նոյեմբերի 6-ից մինչև 2020թ. մայիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի համար

ԱՄՆ դոլար

Հոդված	Դիմում	Գրասենյակ	ՀԲ	Տարբերություն
Ծրագրի խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում				
	2-DA	2,099	2,099	-
	3-DA	17,483	17,483	-
	4-DA	2,001	2,001	-
	6-DA	35,805	35,805	-
	7-DA	59,899	59,899	-
	8-DA	12,176	12,176	-
	9-DA	48,065	48,065	-
	10-DA	43,784	43,784	-
		<u>221,312</u>	<u>221,312</u>	<u>-</u>
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)				
	1A-DA	60,000	60,000	-
	4-DA	(2,001)	(2,001)	-
	6-DA	2,001	2,001	-
	10-DA	(43,784)	(43,784)	-
		<u>16,216</u>	<u>16,216</u>	<u>-</u>
Ընդամենը		<u>237,528</u>	<u>237,528</u>	<u>-</u>

10 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2.1-ում՝ Գրասենյակի քաղաքականությունն է Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստել համաձայն ՀՀՀՀՄՍ-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով»: Այնուամենայնիվ, Գրասենյակը ներկայացրել է նաև ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվություն՝ որպես բացահայտում, որը խրախուսվում է «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» ՀՀՀՀՄՍ-ում:

	2020թ. մայիսի 11-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար			
<i>Ակտիվներ</i>			
Ծրագրի ծախսեր	242,935	23,581	2,098
Հատուկ հաշիվ	16,216	57,999	57,901
Կառավարության համաֆինանսավորում	780	-	-
Ընդամենը ակտիվներ	259,931	81,580	59,999
<i>Զուտ ակտիվներ և պարտավորություններ</i>			
ՎԶՄԲ-ի միջոցներ	237,528	79,582	60,000
Կառավարության համաֆինանսավորում	21,627	3,803	-
Փոխարժեքային տարբերություն	776	(1,805)	(1)
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ	259,931	81,580	59,999

11 Ծրագրի իրականացում

Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվության «Ծրագրի խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում» տողում ներառված է ՀՀ վարչապետի աշխատակազմի (հետագայում Պատվիրատու) և «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ ու «Սընթ Բարբարա» ՓԲԸ (հետագայում Խորհրդատու) միջև կնքված պայմանագրի շրջանակներում վճարված 59,681 ԱՄՆ դոլար գումարը, ինչը կազմում է պայմանագրի ընդհանուր արժեքի 60%-ը: Պատվիրատուն Խորհրդատուին չի վճարել պայմանագրի մնացած մասը և չի ընդունել Խորհրդատուի ներկայացրած վերջնական հաշվետվությունը (Report 3), պատճառաբանելով, որ հաշվետվության վերջնական տարբերակն էականորեն չի համապատասխանում «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծություն և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի և Խորհրդատուի կողմից Պատվիրատուին տրամադրված մեթոդաբանության պահանջներին: Այնուամենայնիվ, Գրասենյակի գնահատմամբ Խորհրդատուից ստացված ծառայությունների մի մասը բավարարել է տեխնիկական առաջադրանքի և Պատվիրատուի մի շարք պահանջներին, և առաջիկայում այն նշանակալի հետազոտական հիմք է հանդիսանալու հանքարդյունաբերության մշակվելիք ռազմավարության համար: Հետևաբար, Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում չի ներառվել միայն պայմանագրի 40%-ը: